



- 30 նոյեմբերի 17-ին «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ Համաշխարհային բանկի Ստանդարտների եւ կանոնների պահպանման հաշվապահական հաշվառման եւ աուդիտի ոլորտի հաշվետվության շնորհանդեսը: Միջոցառմանը ողջունելի խոսքով հանդես եկան ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը եւ Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի ղեկավար Արիստոմենե Վարուդակիսը:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց Համաշխարհային բանկի մասնագետների կազմած՝ հաշվապահական հաշվառման եւ աուդիտի ոլորտի հաշվետվությունը, քննարկվեցին մասնագիտական եզրահանգումները, ինչպես նաեւ առաջարկներ՝ այդ ոլորտների բարեփոխումների վերաբերյալ: Ոլորտի մասնագետները ներկայացրին նաեւ աշխարհում եւ տարածաշրջանի երկրներում ֆինանսական հաշվետվողականության բնագավառում իրականացվող բարեփոխումները, անդրադարձան այդ

րեցին ՀԲ Գործադիր տնօրենների խորհրդի հուլիսի 2-ին հաստատած՝ 60 միլիոն ԱՄՆ դոլլար գումարով առաջին «Չարգացման քաղաքականության գործառնությունը» (ՉԲԳ-Ի) Հայաստանի համար:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում առաջարկվող՝ տարեկան գործառնությունների երեք շարքերը սատարում են Հայաստանի ռազմավարական երկու նպատակներին.

- ✓Ներկա ցնցումների նկատմամբ խոցելիության մեղմում՝ անապահով խավի պաշտպանությանը եւ մարդկային կապիտալի առավել զարգացմանն աջակցելու միջոցով,

- ✓մրցունակության բարելավում՝ ավելի լավ կառավարման եւ ներդրումային միջավայրի խոչընդոտները վերացնելու միջոցով, ինչը հետճգնաժամային վերականգնման եւ միջնաժամկետ աճի առանցքային նախապայմաններից է:

Խոցելիության մեղմման հարցում Հայաստանին աջակցությունն


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՔՐՈՆԻԿՈՆ

բարեփոխումների վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության խնդիրներին:

Միջոցառմանը մասնակցում էին նաեւ հաշվապահական հաշվառման եւ աուդիտի ոլորտների շահագրգիռ՝ ՀՀ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, դոկոր կազմակերպությունների, մասնագիտական ծառայություններ մատուցող (աուդիտորական, խորհրդատվական ընկերություններ), ինչպես նաեւ այդ ծառայություններից օգտվող (խոշոր կազմակերպություններ, բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայում գործող ընկերություններ, ՓՄՁ-ներ) կազմակերպությունների ներկայացուցիչներ:

- 30 նոյեմբերի 7-ին ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը եւ Համաշխարհային բանկի՝ Հարավային Կովկասի երկրների տարածաշրջանային տնօրեն Ասադ Ալամը ստորագ-

ուղղված է այնպիսի միջոցառումների, ինչպես սոցիալական ապահովության ցանցերի ծրագրերի ֆինանսավորման ավելացումը, այդ թվում՝ ընտանեկան նպաստներ, կենսաթոշակներ եւ գործազրկության ապահովագրություն, ընտանեկան նպաստների ծրագրի վերանայում՝ հասցեականության արդյունավետությունը բարելավելու նպատակով, առողջապահության ոլորտում՝ անապահով եւ խոցելի խավի համար ընտրված առաջնահերթ ծրագրերի ֆինանսավորման վերականգնում՝ ծառայությունների մատուցման ուղղությամբ բարեփոխումների խորացմամբ, մասնագիտական եւ նախադպրոցական կրթության բարելավմամբ, ինչպես նաեւ էներգետիկայի ու բնական պաշարների կայուն օգտագործման ամրապնդմամբ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունն ավելի արդյունավետ գնահատելու միջոցով:



Վերականգնման եւ աճի համար մրցունակության ամրապնդման նպատակով Գործառնությունը կօժանդակի բանկային համակարգի վերահսկողության ուժեղացմանը եւ իրացվելիության ապահովմանը, ձեռնարկությունների գրանցման ծախսերի նվազմանը,

Պետական եկամուտների կոմիտեի առաջնահերթ բարեփոխումների միջոցառումների ծրագրի ընդունմանը՝ ըստ ժամանակացույցի եւ կատարողականի հիմնական ցուցանիշների: Աջակցությունը ներառում է նաեւ Պետական ծախսերի եւ ֆինանսական հաշվետվողականության (PEFA) գնահատման կազմումն ու հրապարակումը, որը հետագա բարեփոխումների համար որպես ելակետ կծառայի, Հանրային ծառայության մասին օրենքի ներկայացումն Ազգային ժողովին, որը կներառի նաեւ շահերի բախման հարցերին անդրադարձող դրույթներ:

• Հուլիսի 15-16-ը ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանի գլխավորած պատվիրակությունը Բոսնում մասնակցեց ֆինանսական եւ տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի երկօրյա բանակցություններին: ՀՀ պաշտոնական պատվիրակության կազմում էին ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը, ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Զավադյանը, ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Չաքարյանը եւ այլ պաշտոնյաներ:

Բանակցությունների շրջանակներում քննարկվեցին տնտեսական կայուն զարգացմանը, էներգետիկային եւ շրջակա միջավայրին առնչվող խնդիրներ, ինչպես նաեւ ապակենտրոնացմանը, ժողովրդավարությանը եւ համայնքային զարգացմանը վերաբերող հարցեր:

Բանակցությունների արդյունքում ստորագրվեց արձանագրություն՝ առաջիկա երկու տարվա ընթացքում Գերմանիայի կառավարության կողմից Հայաստանին մոտ 130 մլն եվրո վարկային եւ դրամաշնորհային գումարներ հատկացնելու շուրջ երկկողմ պայմանավորվածության վերաբերյալ:

Հայ-գերմանական երկկողմ համագործակցությունը սկիզբ է առել 1993թ. սկզբին՝ տեխնիկական օժանդակության շրջանակներում, իսկ 1995թ. ի վեր իրականացվում են նաեւ ֆինանսական համագործակցության ծրագրեր: 2001թ. միջկառավարական բանակցություններից հետո այդ շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով «Կովկասյան նախաձեռնության» տարածաշրջանային ծրագրերը: Հայ-գերմանական ֆինանսատնտեսական համագործակցությունը կենտրոնացած է երեք հիմնական ոլորտներում՝ ֆինանսական եւ մասնավոր հատված, էներգետիկա, ջրամատակարարում եւ ջրահեռացում: Փոքրածավալ դրամաշնորհային ծրագրեր են իրականացվում նաեւ առողջապահության եւ բնապահպանության ոլորտներում:

• Սեպտեմբերի 17-ին ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) «ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրի» ղեկավար Մարտին Դինկսգլ ստորագրեցին արձանագրություն՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պաշտոնական թարգմանության աշխատանքներն ավարտելու վերաբերյալ, որին հաջորդեց հայերեն թարգմանված ստանդարտների պաշտոնական հանձնման արարողությունը:

Ստանդարտների թարգմանության եւ խմբագրման աշխատանքներն իրականացվել են USAID «ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրի» աջակցությամբ՝ ՀՀ հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների ծրագրի շրջանակներում, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (International Financial Reporting Standards):

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը եւ USAID հայաստանյան առաքելության տնտեսական բաժնի ղեկավար Դեյվիդ Հալլը:

• Հոկտեմբերի 21-ին Երեւանում կայացավ PEM-PAL (Պետական ծախսերի կառավարում-նախնական ու-

սուցմանն աջակցում») ծրագրի՝ հանրային հատվածի ներքին աուդիտորների համար նախատեսված հիկզերորդ եռօրյա աշխատաժողովը, որին մասնակցում էին 15 երկրների ներկայացուցիչներ: Ծրագիրն իրականացվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրների հանրային ֆինանսների կառավարման ոլորտում կարողությունների զարգացման նպատակով:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին ներքին աուդիտի ստանդարտներին, ընթացակարգերին, ուսուցմանն ու հավաստագրմանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում իրականացվող բարեփոխումներին վերաբերող խնդիրներ:

PEM-PAL ծրագրի նախորդ աշխատաժողովները տեղի են ունեցել Սլովենիայում, Թուրքիայում եւ Մոլդովայում:

• Դեկտեմբերի 21-ին ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը մասնակցեց Մոսկվայում կայացած՝ Եվրասիական տնտեսական համագործակցության Հակաճգնաժամային հիմնադրամի խորհրդի առաջին նիստին: Զննարկվեցին եւ հաստատվեցին Հիմնադրամի 2010թ. գործունեությանն առնչվող մի շարք փաստաթղթեր, մասնավորապես՝ Հակաճգնաժամային հիմնադրամի փորձագիտական խորհրդի կանոնակարգը, կազմը, գումարների հատկացման կարգը եւ այլն:

Եվրասիական տնտեսական համագործակցության Հակաճգնաժամային հիմնադրամի ստեղծման համաձայնագիրը ստորագրվել է 2009թ. հունիսի 9-ին Մոսկվայում՝ անդամ երկրների կառավարությունների ղեկավարների կողմից: Հիմնադրամի կանոնադրական կապիտալում Ռուսաստանի բաժինը կազմում է 7.5 մլրդ դոլլար, Ղազախստանինը՝ 1 մլրդ դոլլար, Բելառուսինը՝ 10 մլն դոլլար, իսկ մյուս երկրներինը, այդ թվում նաեւ Հայաստանի մասնաբաժինը կազմում է 1 մլն դոլլար: Հայաստանը դեկտեմբերի 17-ին արդեն փոխանցել է գումարի 10%-ը, իսկ մնացած 90%-ը, Հիմնադրամի ստեղծման պայմանագրի համաձայն, փոխանցվելու է մուրհակի տեսքով: ■